20.07.2020թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 432436/19

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով 20.07.2020թ. թիվ 28679 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների <<ԿՈՉՈՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Սերգեյ Նիկողոսյանը (ՀՎՀՀ՝ 02245045, հասցե՝ ՀՀ ք.Երևան, Շենգավիթ, Մայիսի 9փ. 13, 32բն.) ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի վճարել ընկերության հարկերը, որի հետևանքով պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առ 25.05.2020թ-ի դրությամբ կազմում են 1.975.492 դրամ, որից 1.679.279 դրամը առաջացել է 2020թ-ի ապրիլ ամսվա ներմուծման հարկային հայտարարագրից, որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով:

Կողմը ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին չի ներկայացել: Գործում առկա չեն առարկություններ, բացատրություններ, լրացուցիչ ապացույցներ և միջնորդություններ:

Այն փաստը, որ Սերգեյ Նիկողոսյանը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է իրավախախտում, որի համար ենթարկվել է վարչական տույժի (ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 20.04.2020թ-ի թիվ 406456/15-վ որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածի, Սերգեյ Նիկողոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ՀՀ ՊԵԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ГОСУДАРСТВЕННЫХ ДОХОДОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
STATE REVENUE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA 2 057

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40): Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելուց հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. **900005240487**՝ վճարման անդորրագրի <<**նպատակ**>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացաորոշմանպատճենը _____